յիշատակում է նաեւ "Arimoi" անունով մի ժողովուրդ, այն եւս այնպիսի կապակցութեան մէջ, որ այդ ժողովուրդի բնավայրը հայերի հնագոյն բնավայրի հետ նոյնանում է:

Հայաստանի նախարքնիկները, խալդերը, Arimi-ի վրայ աւելացրին խալդական ini վերջաւորութիւնը, որ հայերէնում էլ շարունակեց մնալ որպէս ունի (Բագրատ-ունի, Արծրունի եւայլն):

Այդ անունը խալդերից առան պարսիկները, սրանցից էլ յոյները, իսկ վերջիններից արդէն բոլոր միւս ազգերը:

Այն հարցին, թէ Շապուհ Բագրատունու անունով հրատարակուած պատմութեան հեղինակը ո՞վ է — իրո՞ք որ Շ. Բ., թէ մի ուրիշը, Ռոթ խոստանում է վերադառնալ առանձին ուսումնասիրութեամբ: Իր դրախօսութեան մէջ նա յիշատակում է ծանօթ կարիքները եւ աշխատութիւնները այդ մասին:

Պիտի մաղթէինք, որ «Հայկականք» հանդէսին յաջողուէր իրագործել առաջադրուած նպատակը, նպաստելով հայագիտութեան զարգացմանը Արեւմտեան Եւրոպայում: Դրա համար հարկաւոր է, որ Եւրոպայի հայագէտների հետ միասին նաեւ մերոնք իրենց մասնակցութիւնը բերէին այս ձեռնարկին:

Բերլին

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

(ԱՄՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Գրեց՝ ՍԻՄԷԼ ՍԷԴ

«Արձակուրդի» օրերը շարունակւում են Հայաստանում: Երկրի վարիչները, օդամաքուր ամառանոցներում, ոյժ են հաւաքում ձմեռուայ համար: Ասպարէզը շարունակում է մնալ երկրորդական մարդկանց — «զեղադիւղանների», ինչպէս իրենց մէջ անուանում են պետերը, եւ բնութեան տարերքին...

Բնութիւնը այնքան էլ բարեացակամ չէ, սակայն, դէպի Հայաստանի ժողովուրդը: Օրինակ, գաղանները. ձմեռը գայլերն էին քանդում հայ գիւղացու տունը, ամառը՝ բորենիներն են գործի անցել:

«Հայաստանի զանազան վայրերում,— գրում է «Խորհրդ. Հայաստան»ը (թիւ 168),— երեւացել են բաւական քանակութեամբ բորենիներ, որոնցից մեծ վտանգ է սպասւում: Բորենիներն իջել են սարերից եւ տարածուել են զանազան գիւղերում: Այս տարի նրանց թիւն աւելացել է եւ խոշոր վնասներ են հասցնում: Ամենից շատ գոյութիւն ունին Ղամարլուի, Սարդարապատի եւ Էջմիածնի շրջաններում: Իմանալու գիւղում բորենիները փախցրել են 12 տարեկան մի աղջիկ եւ հնարաւոր չի եղել նրան ազատել: Նման դէպքեր պատահել են նաեւ Ղամարլուի շրջանում: Գիշերով բորենիներին երբեմն յաջողւում է գիւղական տների կտուրներից փախցնել փոքրահասակներին»:

Ինչպէ՞ս է կռւում իշխանութիւնը այս չարիքի դէմ. «Պատրաստւում են բորենիների մասին հրատարակել հանրամատչելի գրքոյկներ ու պլակատներ»: «Որսորդական ընկերութիւնը յատուկ շրջաբերականով դիմել է բոլոր գաւառաժիններին եւ հրահանգել է կազմակերպել յատուկ խմբակներ՝ նրանց դէմ ուժեղ պայքար մղելու համար». նոյն Որսորդական ընկերութիւնը «մտադիր է» յատուկ խմբակ ուղարկել Էջմիածնի եւ Ղամարլուի շրջանը:

Պատկերը լրիւ կը լինէր, եթէ պլակատներից զատ որոշուէր նաեւ կազմակերպել բոզքի միտինգներ «գիշատիչ» գաղանների դէմ...

Բորենիներին գործակցում են եւ հիւանդութիւնները. մալարիան շարունակում է աւեր գործել:

Ըստ պաշտօնական տեղեկութիւնների այս տարուայ առաջին կիսամեակում Հայաստանի բոլոր տրօպիկական կայանները այցելել են 87,199 մալարիայով հիւանդներ: Սարսափելի